Ուրախանանք երկու թիմերի համար

Էշլի Սթարք
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Հարավային Կորեայում:

Ջեյնն ուտում էր իր վերջին գդալ լապշան: Ըմ: Համեղ էր:

Եկեք խաղանք Yut Nori (Յուտ Նորի): ասաց մորեղբայր Ջի-Հոն:

Կրկին եկել էր տարվա այդ ժամանակը: Նրա ընտանիքը նշում էր Chuseok-ը՝ կորեական Գոհաբանության օրը: Այսօր Ջեյնի ընտանիքը հավաքվել էր զանազան համեղ ուտեստներ ճաշակելու և միասին Յուտ Նորի խաղալու համար: Յուտ Նորին Ջեյնի սիրելի խաղն էր:

Բոլորը շրջանաձև նստեցին հատակին: Ջեյնը նայեց շուրջը: Ո՞ր թիմում էր նա ցանկանում լինել: Նա մոտեցավ նստելու մորեղբայր Ջի-Հոյի կողքին: «Ես ուզում եմ լինել ձեր թիմում»,- ասաց նա: «Մենք մեծ հաղթանակ ենք տանելու»:

Մորեղբայր Ջի-Հոն ծիծաղեց: «Քանի որ դու մեր թիմում ես, անկասկած, լավ հնարավորություններ ունենք»:

Ջեյնի մայրիկը խաղատախտակը դրեց շրջանի կենտրոնում: Ջեյնն օգնեց նրան շարել մասերը: Նրանք չորս փայտերը փոխանցեցին այն թիմին, որը սկսելու էր խաղը:

Ջեյնի զարմուհին՝ Աննան սկսեց խաղը: Նա փայտերը նետեց օդ: Ձողիկների վայրէջքի ձևը ցույց տվեց, թե այդ թիմը որքան կարող է առաջ շարժվել խաղատախտակի վրա: Բոլոր չորս փայտերը դեպի ներքև էին ուղղված, ինչը նշանակում էր, որ Աննան Յուտ է ստացել: Նա իր թիմի խաղաքարը չորս անգամ առաջ տարավ *և* խաղը շարունակելու արտոնություն ստացավ:

Ջեյնը խոժոռվեց: Նա չէր ուզում, որ մյուս թիմը հաղթեր:

ՆԱԽՈՒՇԵՐԸ՝ ՈՒՐՍԼ ԴՈՒՌՅԱԻ

Բայց Աննան Ջեյնի թիմում չէր:

Ջեյնը ձեռքերը ծալեց և խոժոռվեց: «Ես հույս ունեի, որ նա լավ նետում չի կատարի»,- շշնջաց նա մորեղբայր Ջի-Հոյին:

«Ուրախացիր»,- ասաց մորեղբայր Ջի-Հոն: «Խաղը դեռ նոր է սկսվել»: Նա քաջալերական ժպիտ պարգևեց նրան:

Աննայի երկրորդ փորձից հետո Ջեյնի թիմը նետեց փայտերը: Բայց նրանք չկարողացան տեղափոխել իրենց խաղաքարերն այնքան հեռու, որքան Աննայի թիմը:

Խաղի յուրաքանչյուր փուլից հետո Ջեյնի ընտանիքի անդամները ուրախանում և ծիծաղում էին: Ջեյնը դիտում էր, թե ինչպես են խաղաքարերը շարժվում խաղատախտակի շուրջը: Բոլորը զվարճանում էին:

Բոլորը՝ բացի Ջեյնից: Նրա թիմը դեռևս պարտվում էր:

Շուտով Ջեյնի հերթն էր: Նա փայտերը նետեց օդ, բայց միայն մեկը հաջողակ վայրէջք կատարեց: Նրա թիմի խաղաքարն առաջ շարժվեց ընդամենը մեկ քայլ:

Ջեյնը ձեռքերը ծալեց: «Ես այլևս չեմ խաղում»,- բղավեց նա: «Ես ուզում էի, որ մենք հաղթենք»:

Հանկարծ բոլորը լռեցին: Երբ նա գլուխը բարձրացրեց, ընտանիքը նայում էր նրան: Նրանց կարծես զարմացնում էր նրա զայրույթը:

Ջեյնը կարմրել էր: Նա վատ էր զգում, որ երջանիկ չէ իր ընտանիքի համար: Նա սովորաբար այդքան չէր զայրանում: Նա ոտքի կանգնեց, որպեսզի հեռանա շրջանից:

Մորեղբայր Ջի-Հոն մեկնեց ձեռքը: «Պարտադիր չէ, որ դու հեռանաս,-ասաց նա,- Կարևորը հաղթելը չէ: Պարզապես փորձիր ուրախ ժամանակ անցկացնել»:

«Լավ»: Ջեյնը նորից զբաղեցրեց իր տեղը: Նա ցանկանում էր զվարճանալ, ինչպես բոլորը: Նա խոր շունչ քաշեց և դիտեց, թե իր զարմիկ Բենին ինչպես է նետում փայտերը:

«Հաջող նետում էր, Բեն»,- ասաց մորեղբայր Ջի-Հոն: Նրա ձայնի մեջ ուրախություն զգացվեց:

Ջեյնը լայն բացած աչքերը հառեց մորեղբայր Ջի-Հոյի վրա: Նա ուրախ էր հակառակորդ թիմի համար: Երևի դա էր պատճառը, որ նա այդքան ուրախ էր:

Երբ սկսվեց հաջորդ փուլը, Ջեյնը որոշեց ուրախանալ *երկու* թիմերի յուրաքանչյուր մասնակցի համար: Մորեղբայր Ջի-Հոն ճիշտ էր: Կարևորը հաղթելը չէր: Հիսուսը կարող էր օգնել նրան երջանիկ լինել իր ընտանիքի անդամների համար, նույնիսկ եթե նա պարտվեր:

Երբ կրկին Աննայի հերթը հասավ, Ջեյնը ժպտաց նրան: «Հաջողություն եմ մաղթում քեզ: Դու կարող ես հաջողել»:

Աննան ժպտաց նրան՝ ի պատասխան: Ջեյնը ներքուստ ջերմություն էր զգում: Նա արդեն ավելի ուրախ էր: ●

«Կյանքում շատ բան կախված է մեր վերաբերմունքից: Այն, թե մենք ինչպես ենք տեսնում իրերը և արձագանքում ուրիշներին, շատ բան է փոխում»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն (1927–2018), «Ապրել լիառատ կյանք», *Լիահոնա*, հունվար 2012, 4: